


ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուկարիա
Տարեկ. 10 ֆր
վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոյ 30 սենդ
Կլենտիկ



ՊԵՏԵՐԵՆԷ

Գրութիւնք եւ
չին տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՀԱՆԴԵՍ · ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ


Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Ե. ՏԱՐԻ

ՄԱՅԻՆ. 26 ՀԱՐԱԺ 1901

ԹԻԻ 213

Կ' Զ Գ Ո Ւ Շ Ա Յ Ն Ե Ն Ք



Օ՛հ, ի՛նչ դառն և կարծես քիչ մըն ալ ապերախտ է դերը այն լրագրութեան որուն մեծագոյն զբաղումը դարձած է քօլաւմերիկեւ բոլոր գէձութիւնները, բոլոր անխիղճ շահատակութիւնները, բոլոր նենգամիտ սարուածքներն անոնց որոնք, հերոս ազգասէրի պոռոտ ու պոռնիկ, չպարին տակ, հանրային գործունէութեան մը ազգակը կ'ուզեն հանդիսանալ, այս ընթացքուն մէջ չունենալով ուրիշ մտասկեռում եթէ ոչ կշտացնել անձնական փառասիրութեան կիրքը որմէ կերին կը մրկին, ու նաև յափրացնել ուրիշ տրամադրութիւններ, շատ մօտ ու գրեթէ համանման այն տրամադրութիւններուն որոնք ամբողջութեամբ մէջ սլքտացող ու սողացող գրպանախոյզներուն տիրական ձիրքը կը կազմեն:

Լրագրութեան այս դերին ծանրութիւնը որ աստիճան կսկծալի կը դառնայ սակայն երբ մանաւանդ մեր սղգին այս ողբալի վիճակին մէջ է որ հայ մամուլը կը պարտաւորուի հպատակիլ այդ դերին ցաւագին բայց անխուսափելի ստանձնումին:

Այս տխուր ճշմարտութիւնը հոս պարզած ատեննիս անշուշտ նպատակ չունինք ծանրանալու հայ յեղափոխութեան, հայ մամուլին և հայ ազգին իրարու հանգէպ ունեցած պարտաւորութիւններուն և այն գերազանցօրէն պինդ ու անքակ կապերուն վրայ որոնց ամբողջին ճշգրիտ

ըմբռնումէն ու խղճամիտ դործադրումէն կախում ունի ազգային փրկագործութեան անձկալիօրէն սպասուած ըոպէն:

Ձէ՛, հոս պարզապէս կ'ուզենք մեր տխուր բայց և այնպէս անհրաժեշտ պարտքը կատարելու համար ժողովրդեան ուշադրութիւնը դարձնել անձի մը խեղանդամ ու ձախող գործունէութեանը վրայ որ չարաշահութեան մը բոլոր շարաւիյց անտանջաններովը կը ներկայանայ մեզ: Գատեցէ՛ք:

Քանի մը չարաթ առաջ խուցաւ թէ քաղաքիս մէջ «Ժողովրդային միութիւն» անուամբ ընկերութեան մը կազմակերպումը յղացած էին կարգ մը ազգայիններ, որոնք մինչև իսկ ընկերութեան կանոնադրին պատրաստութիւնը յանձնած են եղեր քանի մը ձեռնհաս անձերու: Իրաւ է որ առջի վայրկեանէն իսկ մեր անկեղծ համոզումը, այս մասին, սա եղած է, թէ «ընկերութիւն» պատրական անունին տակ իսկապէս նոր կուսակցութիւն մըն էր որ ծիլ ու բողբոջ կարճակէր, հարկաւ սատարելու համար ընդարձակմանը այն... խառնաշփոթութեան որ հիմակ կը տիրէ հրապարակին վրայ: Բայց մեր կասկածը անկից մանաւանդ առաջ կուգար վասն զի ա՛յդ կարգ մը ազգայիններուն կարապետ հանդիսացող անձը հանրածանօթ է իր յեղափոխական... սնամէջ ու սնապարծ գործունէութեամբը և, գլխաւորապէս, իր ծաղրելի եսամոլութեամբը:

Արդ, մեր յիշեալ ազգասէրին այս նորագոյն գործունէութեան տալէն ի՛նչ կ'ուզէք որ ելլայ: Մարդը, ամէն բանի նախաձեռնութիւնը ինք ստանձնել ուզելով (թէ և տակաւին ոչ ընկերութիւն կայ և ոչ կանոնագիր), առանց մէկուն խորհուրդ հարցնելու, անձայն անշուկ, ասդիէն անդիէն տպագրական տառեր կը ճարէ, այս տառերը

իրարու քով կը բերէ և օտար տպարանի մը մէջ տպել տալով զանոնք՝ հետեւեալ հրաշակերտէն հազար օրինակ ձեռք կը բերէ.

Բաժին

Թիւ

Հ Ն Կ Ա Լ Ա Գ Ի Ր

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ (*)

Տիար վճարեց
ամսական . . . Փր. . . . սանդիւն:

1901

Ի դիմաց վարչութեան
Գանձապետ

Հոս հարկ չի կայ բացատրելու թէ ընկալագիր ըսուածը տեսակ մը տպագրուած թուղթ է որ ժողովրդեան մէջ կը տարածուի դրամի փոխարէն: Հիմա կը հարցնենք. Ա. արդէն կայ «Ժողովրդային Միութիւն» Հայոց» անունով մարմին մը. Բ. եթէ կայ, ո՞վ են անոր վարչութեան անդամները. Գ. ո՞վ է գանձապետը. և թէ Գ. մեր հերոսը ի՞նչ իրաւասութեամբ և ի՞նչ հեղինակութեամբ կը յանդգնի ընկալագիրներ տպագրելու՝ անշուշտ զանոնք հնչուն դրամի վերածելու բարի ու ազգասիրական նպատակով ? ? :

Աւելորդ է ըսել որ երբ այս տեսակ ընկալագիր մը ներկայանայ ազգայնոց, փութկոտութիւնը պիտի ունենան իր տիրոջ վերագարձելու զայն՝ չիլ գործէ մը անգիտակից մեղսակէցը չհանգիստանալու համար:

ԱՐՏ

(*) Այս ընկալագրին հեղինակին կը հարցնենք թէ ի՞նչ իրաւամբ «Հայոց» խոշոր ու ընդհանրական բառը կը յանդգնի կցել իր խելապատակին մէջ միայն գոյութիւն ունեցող կարծեցեալ մարմնի մը կարծեցեալ ընկալագրին վրայ. ամօթ չէ:

Ծ. Խ.

Կ Ն Ի Ք Ը

Վերջին պահուն ստուգեցինք թէ «Ժողովրդային միութիւն» Հայոց !!! արդէն իսկ պատրաստած է ի՞նչ փութկոտութիւն տէ՛ր Աստուած իր հաւկթաձև. ԿՆԻՔԸ, որուն շրջանակին վրայ քանդակուած է իր համբաւաւոր անունը. մէջ տեղը երկու ձեռք՝ իրարու մօտեցած միութիւնը խոր-

հրդանշելով, ու ձեռքերուն վրայ, մէկ կողմը դաշոյն մը, միւս կողմը յաղթութիւնը բառը:

Բոժոժիկ. — Է՛հ, քանի որ այս կնիքն ալ չի նուաժ է, յաղթութիւնը ? ? ապահովուած ըսել է:

Հայ ազգին աչքը լոյս:

Ազգ. Հիւանդանոցի Խնամակալութիւնը Որբանոցի բոլոր սրբերուն ալ արհեստ ուսուցանելու միջոցներուն վրայ սկսած է խորհրդակցել: Խնամակալութիւնը այս տարուան արհեստաւոր շրջանաւարտներու իբր շաբաթական ունեցած գումարներն իւրաքանչիւրին յանձնելու է իբր դրամագլուխ յառաջիկային մէջ իրենց անձնական գործին գործածելու համար: Նաև որոշել է Ազգայնոց Որբանոցի մէջ հաստատել ձեռագործի, ձեռագիտութեան գործնական և տեսական դասընթացք մը:

— Տփղիսի մէջ գրասէրներու յանձնախումբ մը կազմուել է տօնելու համան տեղւոյն Մայրեկեղեցւոյ աւագերէց Տ. Գիւտ քահանայ Ազանեանցի գրական գործունէութեան 25 ամեակը:

— Տեղւոյս քահանաներէն Տ. Սարգիս Հայր Ղարիպեան՝ ամսուան մը օգափոխութեան համար երեքշաբթի օրը Պոլիս մեկնեցաւ:

ՇԻՐԱԶԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայ-եկեղեցի ամսաթերթին ղրկուած թղթակցութիւնէ մը կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնները.

«Եօթնեւտաներորդ դարու սկիզբներն Շիրազայ (Պարսկաստան) իշխան Ալլահ Վէրտի խանի խնդրանք Մեծն Շահ Աբբաս 500 տուն հայազգի գաղթականներ յուղարկեց ի Շիրազ, որք քաղաքի այլ եւ այլ թաղերում և շրջակայքում հաստատուեցան և հետզհետէ իւրեանց բնաձիր ճարտարութեամբ և առեւտուրով վարդաքան ու ճոխացան. և Շահ Աբբասի իմաստուն քաղաքագիտութեան շնորհիւ ամեն պաշտպանութիւն եւ հանգստութիւն վայելեցին: Որքան ժամանակ այդ մեծ թագաւորն կենդանի էր, իւրեանց համար եկեղեցիս և ճգնաւորական վանս շինեցին, և ամենայն ազատութեամբ իւրեանց քրիստոնէական կրօնը պաշտում էին: Բայց յետ այնորիկ այլ և այլ ժամանակներուն անպիտան իշխանաց հարստահարութեանց և հալածանաց ենթարկուեցան, և այլ ևս չկարողանալով համբե-

րել՝ հետզհետե հատուած առ հատուած թողին փախան Շիրազուց, իւրեանց տուն ու տեղ ու կալուած ի ձեռս Պարսից թուղնելով, ինքեանք գաղթեցին ի Բուշէն, Բաղդադ, և Հնդկաստանի քաղաքներ:

Այժմ մնան միայն 15 տնաշափ հայք, որք ոչ թէ յառաջին գաղթականութենէ մնացեալ բնիկ Շիրազեցիք են, այլ վերջերս նոր Զուզայէն եկած գաղթականք են: Սոքա ունին մի փոքրիկ եկեղեցի և Սպահանայ գաւառակի Գեազազ գիւղից եկած մի քահանայ Տէր Զաքարիա Մարտիրոսեան անուամբ, որն որ մերձ 12 տարի է այդ ժողովրդեան եւ եկեղեցւոյ հոգեւոր պաշտօնեայն է:

Եկեղեցական շէնքն Շահ Աբբասի ժամանակի մնացածներէն է. սակայն երկրաշարժի պատճառաւ, որ գրեթէ սմեն տարի պատահի, մի քանի անգամ քանդուել եւ կրկին շինուել նորոգուել է:

Գիտէք անշուշտ որ Շիրազում վախճանեցաւ մերազգի գրագէտ եւ անուանի բանաստեղծ Մեսրոպ Թաղիադեանց, և նորա գերեզման եւ շիրիմն կայ մինչեւ ցայսօր Հայոց հանգստարանում: Բաւաքու կոչուած սարի փառակում, Բաւաքու սարն մի ուրիշ տեսակէտով եւս համբաւուոր է հայազգեաց համար: Այդ լեռան վերայ կը գտնուի մի փոքրիկ շէնք ուր Հայոց անգրանիկ լրագրի Ազդարարի խմբագիր և հիմնադիր Տէր Յարութիւն Շմաւոնեան բաւական ժամանակ (չգիտեմ թէ իւր կենաց վերջին տարիներում թէ յառաջագոյն) ճգնութեամբ անցուցած է:

Շիրազայ փոքրիկ հայ գաղութին մէջ կան մի քանի երիտասարդներ որ դրամատան մէջ և եւրոպացի վաճառականաց մօտ գրագիր են, իսկ մնացեալ մի քանի տուն հայերը ըստ մեծի մասին գինեգործութեամբ և գինեվաճառութեամբ կապրին:

Ի Յ Զ Ա Հ Ա Թ

Մէքթուպու իմզաւաղգտան սօնրա ութանըպ վէ տահա տօղրուսու գօրգուպ տա իմզասընը եըրթմըջ օլան բի. ֆիւրպաղա խապէր վէրիւրիզ բի, կէչէն նիւսիւնմիզտէ եազըլան թիւրքձէ պէնտին հիչ պիր քիմսէյէ շուսուլի օլմատըղը եէկնապարտան ալնաշըլըր: Պիղ թարաֆըմըզա կէօնտէրիլէն մէզբիւր պէնտին՝ սայիր պէնտիւր կիպի շու եա պուզաթա ալիտ օլմատըղընը պիլվազիֆէ էմին օլտուգտան սօնրա նէշր իթմըջ խիթ. պինտէն ալէյճ, պու խուսուստա պիր գուսուրուսուզ եօգ տըր: Պուտալա օլմալը պիր տաւամ բի, իսմի, մահլէզի, թարիսի վէ մահալի իգամէթի պէլլի օլմամըջ պիր եազըլընը բէնտի իւզէրինէ հասր տէրէք օրթալըղը վէլվէլէյէ վէրսին, պախուսուս էսկի

վազըթտա վուգու պուլմուշ պիր հալ օլտուղունու պէնտին պալէասընտան ալնաշըլտըգտան սօնրա: Մէքթուպունուզուն միւնսէրիճաթընր թէքմիլէն սիգէ իտտէ իտուպ, խապէր վէրիւրիզ բի՝ էօյլէ թէհտիտէրտէն գօրգան թագըմտան տէյիլիզ, թուրքիատա եաշամայօրըզ տաղ տէվիլէն գատար գուվվէթինիզ տախի օլտա՝ հագսըզ օլտուգտան սօնրա՝ գանուս մուվաճէհէսինտէ բէտի գատար հիւքմիւնիզ գալմապ, վէ հէր նէ գատար թանըլմամագ իչիւն իմզանըզը մէքթուպտան երրթմըջ աթմըջ իսէնիզ տէ՝ էօթէ պէրի չըգարտըլընըզ վէլվէլէ վէ գուճունթուլուղունըզտան եագայը էլէ վէրմիչսինիզ տիր: Իմտի, պիպտէն մապուր տիլէմէլիսինիզ, ապսի հալինտէ՝ կապէթամըզ վասըթտօրլա պէյան իտէճէիզ բի՝ «212 նուսէրօլու նիւսիսէմիզտէ քիմսէյէ շուսուլի օլմայուպ՝ կէչմիլզ գէմանէ տալիր նիւսունէ օլտարագ նէշր օլունան մէզբիւր պէնտի՝ ֆիլանճա տաւամ բէնտի իւզէրինէ մալ իթմիլ տիր: Պունու եազտըգտան սօնրա տախի լաղըմ կէլէն մահալէ միւրաճաթիլէ եազտըմըջ օլտուղունուզ մէքթուպուն իլզահաթընը սիզտէն լմալէպ իտէճէիզ:

ՓՈՒՐ ԹՂԹԱՏԱՐ

Մ. Գ. Նիյօթօլ — Որովհետեւ դուք ալ մէկ բանիներու պէս «Զրկեցի, կը զրկեմ կոր, պիտի զրկեմ» ներուն վերջը չի բերիք, ասոր համար դադրեցուցինք:

Հ Ե Ռ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

(Աժանս Բոժոժիկե Ընկ)

Բարիկ

Տեսնելով որ թերթ հիմնելու մարմաջ ունեցողները հետզհետե կը շատնան, Համալսարանի տպարանը արտի մը վերածուեցաւ, ուր շաբաթը անգամ մը... սունկի պէս պիտի բուսնին և աներեւութանան ճոխ ծրագիրներով բեռնաւորուած հանդէսներ կամ շաբաթաթերթեր:

Բաժանորդագրութիւնք միշտ կ'Անխիկ:

Վառնա

Գօգարճայի տօնավաճառին օրը Ղալաթիոյ կողմը զբօսնելու դացուլ ընտանիք մը պարտաւորեցաւ մինչեւ իրիկուն... ծոմապահութեամբ անցունել, որովհետեւ զիրենք փոխադրող կառքը՝ նորէն քաղաք տարած էր աւանդական խողին և սեյէն՝ որ իր ետեւը՝ ճէնկիլէն վար կախակայեալ մոռցուած էր:

ՁԵՎՈՅՑ

Գօգարճայի տօնավաճառին ամթիւ տեղի ունեցած մէկ բանի զուարճայի դէպքերը, ինչպէս նաև «Կոյն» մը տեղական հին բարբերուող յօգուածին շարունակութիւնը տեղւոյ անձկութեան պատճառաւ յաջորդ թերթերով:

ԲԵՐԱՅԻ ԳԻՃԵՐԸ

Ժամ 1 (Ը.Թ.) — Խանութները կը գոցուին տակաւ ցուցափեղկերու երկաթէ վարագոյրները կամաց կամաց կ'իջուցուն. սալայտակներու վրայ հոծ բազմութիւն մը կը խռնուի. այր ու կին լեփ-լեցուն, առաջինները չուկայէ կը գառնան, իսկ վերջինները՝ քօւննաճէ: Գարեջրատունները, ըզբօսավայրերը, սրճարանները լեցուն են. Թագսիմ, էֆթալօֆօսի մէջ խռնուած են բոլոր խմբադիրները, գրապէտներն ու վարժապետները, որք «ապագայ սերունդը» կ'ընկալու վրայ են՝ կենսարար ու կենսատու ճիւղին դիմաց: Քսան փարայի օղի կը խմեն և 5 զրուշնոց ձեգէ կ'ուտեն:

Ժամ 2. — Տակաւ գարեջրատունները ու կազինոները կը պարպուին. օղիաբանութիւններու վերջակէտը դրուած է ընտանիքի տէր մարդոց կողմէ. բայց դեռ խմողներ կան. ասոնց ցուցամատէն կախուած է օխա մը ձուկ, զոր տուն պիտի տանին իրիկուան ճաշ ընելու համար:

— Հատ մ'ալ, Գրիգոր աղա:

— Չըլլար. տունէն կ'սպասեն... է՛, բէք աչէկ... բայց ասկէ զատ չեմ խմեր:

Բայց, հակառակ այս վերջին խօսքին, կը խմէ միշտ. իսկ տունը՝ խեղճ կիներն ու զաւակները իրենց էրկանը, հօրը կ'սպասեն որպէս զի ճաշեն:

Ժամ 3. — Ներկայացումները սկսելու մօտ են. թատրոններու կիշին առջև յաճախորդները կը ներկայանան մէկիկ մէկիկ: Ընտանիքներ օրիակ կը գնեն. մանչերն ու աղջիկները ուրախ են. իրենք զիրենք երջանիկ կը գան. յետոյ կուգան կիներ միամիտակ, զարգարուն գլխարկներով, գծագրուած դէմքով, գունաւոր ու ճոխ զգեստներով, որոնցմէ անուշ, զգլխիչ բուրուքներ կուգան (Բոժ.— Տեսնուի՞նք): Տոմարակաճառին հետ կը խօսին, կատակներ կ'ընեն. ասոնք թաւալորնի մնայուն յաճախորդներն են, անուշ ու խոստմնալից նայուածքներ կը նետեն չորս կողմ... Յետոյ կուգան շիք պարոնները, կանացի քալուածքով ու խօսուածքով, բարակ գաւազան մը ձեռներին, տոգոյն դէմքով, բարձր, փայլուն օձիքով...:

Ժամ 4. — Երգեցիկ սրճարաններու ժամանակն է. Գօհթսի, Գրիսթալիսրահները տակաւ կը լենան՝ ամեն տեսակ մարդոցմով. կօշկակաւորը, գրադիրը, վարժապետը եւ... սպասուհիները կը շրջին անկաժանք ակնարկներով. յաճախորդ մը կը հրաւիրէ զանոնք. քովը կը նստին և ալ անկէ ետքը գարեջուրի գաւաթներ իրա-

րու կը յաջորդեն: Երգչուհի մը բեմ կելլայ գերմաներէն երգ մը երգելու համար. բոլոր ներկաները ապուշ հիացումով կը դիտեն զայն. զանգաւ կը պարէ... օ՛, ալ ոգևորութիւնը ծայրաստիճան է: Եօթն անգամ իրարու վրայ բեմ կը կանչեն. Օրժէնիսք աղջիկներ՝ ամեն կտորէն ետք կարմիր թաշկինակով մը ծածկուած պնակ մը ձեռներին՝ դրամ ժողովուրդ — չըսելու համար մուրալու — կ'ըլեն. տասնոցի մը փոխարէն ինչ անլուր խօսքեր, առաջարկութիւններ կը լսեն, որոնց ամենուն ալ ժպտելու, համակերպելու հարկադրուած են խեղճերը:

Ժամ 5. — Փռալիներու ժամանակն է. ակնոցաւոր շիք երիտասարդներ երգեցիկ սրճարաններէն ներս կը մտնան, և առանց սրահին վրայ ակնարկ մը նետելու, ուղղակի կ'ըլեն երգչուհիներուն սալօնը: Շամբանեաներու շիշեր կը բացուին ետեւէ ետեւ, երգչուհի մը և երիտասարդ մը մէջ մէկ անկիւն քաշուած ցած ձայնով կը խօսին սեղանի մը շուրջ. երբեմն կը նոջական սուր քրքիշներ կը լսուին, որոնք կը խանգարեն սրահին շաւթիւնը: Սպասուորներն անտարբեր աչքով հեռուէն կը դիտեն ամէն բան:

Ժամ 6. — Կազինոներու, երգեցիկ սրճարաններու և Գոնգորտիայի առջև կը սլքտան գլխարկաւոր, թափթփած զգեստով, մօրուսաւոր մարդիկ... խորհրդաւոր քալուածք մ'ունին: Տակաւ թատրոններն ալ կը պարպուին. կառքերու երթելակութիւն մ'է որ կը սկսի. Շաքարավաճառները կը գոցեն խանութին:

Ժամ 7. — Կամպրինուս, Պարթոլի... երգչուհիները հոն կը թափառին, անոնց հետևորդներն ալ մէկտեղ, սուղ ճաշեր կ'ընեն չեմ գիտեր որ պարոնին ծախքովը, Ոմանք մինակ կը նստին. կսպասեն, բայց ի զուր...:

Ժամ 8. — Փողոցը, մութին մէջէն կին մը կանցնի ծանր քալուածքով մը. տխուր է, կը մտածէ, դէմն ելլողին երեսը կը նայի ու կը ժպտի, աշաշելու, մուրալու պէս կարծես: Անպեխ, կանացի գեղեցկութեամբ, աղւոր հագուած, մատերնին մատանիներով լեցուն երիտասարդներ կը թափառին...:

Ժամ 9. — Փողոցներն ու անկիւնները, սալայտակներու վրայ, գինովներ, թափառաշրջիկներ կը քնանան. գլուխին քարի մը վրայ հանգչեցուցած են, և այդ վիճակին մէջ այնպէս կը խուլան իւր թէ փառաւոր անկողնի մը մէջ գտնուէին: Ինչերային ստորին սրճարանները միշտ բաց են. լուսցնողներու ստուար խուլ մը թուղթ կամ տապալի կը խաղայ, ամանք ալ


անկիւն մը կծկուած կը մրափեն և ատեն ատեն արթննալով երկինք կը նային թէ արդեօք լուսցած է:

Ժամ 10.—Արշալոյսը կը ծագի. առաջի փողոցներու մէջէն մերթ ընդ մերթ գործաւորներ կանցնին՝ աշուրնին քնանալէ ուռած և թարմ օդը շնչելուն գոհ: Գիշերային սրճարանները, կամպրինուս ու Պարթոլի կը պարպուին. տեղոյն, յոգնած երիտասարդներ, դատարկ սրտով ու մանաւանդ գատարկ քաակով, աշուրնին մարած, օձիքնին դարձուած ու յօրան շերտով տուն կը վերադառնան, ուր խեղճ մայրերը իրենց զաւակներուն կ'սպասեն:

Ժամ 11.—Արեւը ծագած ու առուու եղած է ալ. գիշերուան ցոփ ու աղտոտ կեանքին հետքը չէ մնացած. . . անոր տեղը դործօն երթիւնկութիւն մը կը արիւն. ամէն մարդ գործի կերթայ հանդարտ քայլերով, առանց աճապարանքի, և խանութպանը՝ ամենայն ջերմեռանդութեամբ խաչը հանելէ ետք՝ խանութը կը բանայ:

Կ. Պօլիս

Ե. Թ.



ԽԱՂԻ ԴԵՍ ԽԱՂ

Երկուշաբթի օրը սրճարանի մը մէջ գլուխը երեք երիտասարդներ՝ յանկարծ կ'որոշեն քիչ մը գառնուկի միտ առնելով փուռը տալ եւ Գօգարճայի տօնավաճառը երթալով զբօսնուլ: Ուստի երկուքը կերթան միտը կառնեն ու զայն եփելու համար փռապանի մը յանձնելով կը պատուիրեն որ իրենցմէ զատ ուրիշ մէկու մը չի յանձնէ: Այս կարգադրութենէն վերջ սրճարան վերադառնալով զբօսանքի ծրագրին վրայ կսկսին խորհրդակցիլ: Բայց որովհետեւ ցորեկ էր և երեքն ալ անօթութենէ կը նեղուէին, ուստի առժամապէս ախորժակնին զոյգելու համար շերտ մը (տիւրմ) հացը կը սկսին ծամծմել:

Ասոնց խորհուրդէն տեղեակ երեք բարեկամ բարիժաղիկներ՝ որոնք սրճարանին մէկ անկիւնը նստած էին, կ'որոշեն միտը փուռէն հանքաւոր ընելու. ուստի իրենցմէ մին փռապանին ներկայանալով.—Ուսթա, քեզ հետ քէպապը բիշթի խէ վէրս կըսէ:

Փռապանը տեսնելով որ փոխանակ երկուքի մէկ է եկողը.— Էթի ալտիւառ, կը պատասխանէ:

—Նէ՞ սէօյլէյօրսուն ուսթա, պէնտէն պաշղա կէլէն օլմատը պուրայա:

Փռապանը նեղանալով.—Հատէ՛ վրէ՛ կիթ իսինէ. սիզ իքի կէլէճէք իտինիզ, եօգ քի պիր.

Այս պատասխանէն վարպետորդին գործը կը կռահէ, անխօսուկ ետ կը դառնայ ու խնդրի պարզելով երկու ընկերացը, զանոնք փուռը կը դրկէ:

—Աֆէրիմ ուսթա, պռափօ՛ սանա, տիւքեանճը տէտիդին տէ իշթէ պէօյլէ օլմալը. պիզիմ քեհհատ քէպապընը կէլմիշ ալաճագլարը ըմրշ ալա սէն վէրմէմիշսին. սաղ օլասըն, օնլար պիզէ օյուն էաէճէքլէք իտի:

Փռապանը հպարտօրէն.—Հէլպէթ վէրմէյէ՛ ծիէմու, պէնի Գասթանպօլի էնայիսի պանն էթմիսլէր:

—Պռափօ, պէօյլէ եաքտըղըն իշին եիրմի եէրինէ 40 փարա վէրէճէիզ, ըսելով եփողչէքը կը վճարեն ու փռապանին քթին խնդալով եփած միտը առնելէ ետքը երեք ընկերներ քալիֆա մը նստած չունչերնին Մագսուտ աղա կառնեն:

Իսկ միւս պարոնները հաց և ուրիշ պէտք եղած բաները պատրաստելէ ետքը փռապանին ներկայանալով երբ խնդրէն վերահասու կըլլան, բերաննին բաց կը մնայ. ուստի վրէժ լուծելու համար երեքը մէկանց նոյն պարոններուն տուները կը դիմեն:

—Բարեւ մայրիկ.

—Աստուծոյ բարին եա՛վրում, հրամայեցէք:

—Չէ՛, ժամանակ չունինք կենալու, հոս գալերնուս սէպէպը սա է որ, ձեր միւսիւ Պէտիկին հետ ահպապճա Գօգարճա պիտի երթանք պղտիկ ճումպուլթու մը ընելու. ինքը միտ առնելու գընաց ու մեզի ըսաւ որ հոս հանդպինք ու խալալը օրթա քէնճիտէ մը իլէն քանի մը հատ գինիի գաւաթ առնենք:

—Շատ աղէկ եա՛վրում, տանք, ըսելով միւսիւ Պէտիկին մայրիկը (որ անոնցմէ երկուքը կը ճանչնար) միամտաբար կը յանձնէ ուղուած թէնճիթէն ու գաւաթները, զորս տեղ մը պահելէ ետքը Բ. վարպետորդին տունը կերթան:

—Բարեւ ձեզ.

—Աստուծոյ բարին.

—Միւսիւ Աստիկը մեզ զրկեց քի խառափաւն մը ու քանի մը հատ ալ չէրէզի բիաթա տաք:

—Ի՞նչ պիտի ընէ. հէմ ինքը ուր է:

—Ինքը Միհրան աղային հետ միտ առնելու գնաց տէ՛ անկէց շիտակ Գօգարճա պիտի եր-

թայ, մեզի ըսաւ քի մեր տունը ճամբանուդ վը-
րայ է. գացէք ասոնք ուղեցէք:

— Գողարճան ի՞նչ կայ քի:

— Ճանըմ, պէլլի է եա իշթէ. քիչ մը էյ-
լէնմիշ պիտի ըլլանք:

— Հասկցայ. խըյանէթը ինք չեկաւ քի՝
իս ալ հետ պիտի տանիս կըսեմ տէյի:

— Անոր համար չէ, էրիկ—մարդ ճա պիտի
երթանք, չէնէ գլուխնուս վրայ տեղ ունիս, կ'ու-
ղես նէ հրամամէ:

— Շնորհակալ էմ, իմ բերնովս ըսելէս ետ-
քը՝ կէս բերան տալէթով ալ կուգամ զահէր:

— Կէս բերանը ի՞նչ է մայրիկ, թէքմիլ
բերնովս կըսեմ կոր:

— Չէ, անոյշ ըլլայ, Աստուած ճիւղպիւշնիդ
աւելցունէ. հէլպէթտէ օր մըն ալ իս կը տա-
նի, ըսելով միւսիւ Աստիկին մայրն ալ կը յանձ-
նէ խառավանան ու պնակները:

Չերկարենք, երբորդ վարպետորդիին տունէն
ալ քէփիւի մը, գանակ ու պատառաքաղներ առ-
նելով կը տանին տեղ մը կը պահեն:

* * *

Միւր փուռէն հաւքաւորի ընողները երբ ի-
րիկուան ուրախ գուարթ տուններնին կը վերա-
դառնան, միւսիւ Պետիկին մայրիկը կը հարցնէ.

— Ծօ Պետիկ, նա՞սըլ, Գողարճան աղւոր
ճիւղպիւշ ըրի՞ք:

— Մենք Գողարճա չէինք, Մագաւոտ աղա
գացինք:

— Բանի՞ հոգի էիք:

— Իրեք:

— Ծօ ատ խոճա խուզին իրեքնի՞դ կերաք:

— Նասըլ խուզի, քիչ մը միս էր կերած-
նիս:

— Տէր ողորմէա, ինչո՞ւ կը պահես կոր, քիչ
մը միսին համար բաշայիս թէնճիրէն ի՞նչ պիտի
ընէիք:

— Նասըլ բաշայի թէնճիրէ:

— Թապախները ո՞ւր ձգեցիք:

— Նասըլ թապախ:

— Մեզայ տէր Աստուած, ցնդեցա՞ր ծօ, Գո-
ղարճա պիտի երթանք ըսելով արխատաշներէդ
միւսի Միրեանը էկաւ բաշայիս խալայլը թէնճի-
րէն ու սուֆրային թապախները տարաւ:

— Ի՞նչ կըսես կոր մարիկ:

— Էղածը կըսեմ կոր Պետիկ:

Այս միջոցին միւսիւ Աստիկ վրայ կը հասնի:

— Բարեւ ձեզ, պու նէ՞ խաղալովիւն չէյ
տիր աղբար. Միհրանը ու Տրդատը եկէր խուզի
պիտի եփենք ըսելով մեր տունէն խուլախլը խա-
ռավանան ու հինգ ալ թապախ առեր, Արմենա-

կենց տունէն ալ պախըռ մենծ թէփսի մը իլէն-
չաթալ գանակները տարեր են:

— Վո՞յ կածակի կա՞ պիլէքիմ, հասկցայ,
անցածները ըսին քի Միրեանը աղբորը հետ ծոռ-
տեր է, պէսպէլլի խըրսլանմիշ էղած առաւ քա-
լեց զատ օտա մը բռնեց նէ՞ տունին թէնճիրէն
թը վախիթի մը համար ասկէ անկէ ժողուել
էլեր է, ֆախաթ Պետիկ, նայէ քեզի ըսեմ, ես
ան բաշայիս թէնճիրէն չէմ անցնիր. պարոն-
տատիս իշատակն է:

— Միւս էղի մարիկ, թէնճիրէդ առնող չի
կայ. շախա է ըրածնին. մեր ըրած խաղին դէմ
անոնք ալ մեզի խաղ ըրեր են. վաղը գործը կը
կարգադրենք:

— Թապախներէն վաղ կանցնիմ ա՛մա, իլլէ
թէնճիրէն կ'ուղեմ:

— Դուն ըռահաթ ըրէ. թապախներդ ալ
պիտի գան, թէնճիրէդ ալ:

* * *

Յաջորդ օրը վեց պարոններ (բարիժաղիկ-
ներ) իւրար կը գտնեն միեւնոյն սրճարանին
մէջ:

— Միւսիւ Միհրան, աս հիմա ծղա՛ւ:

— Ինչո՞ւ չեղաւ. մենք աւետարանին խօսքը
բռնեցինք. «զինչ սերմանես՝ զայն հնձես»
կըսէ:

— Թէնճիրէն ո՞ւր է:

— Մեր խառավանան ո՞ւր ձգեցիք:

— Թէփսին ու չաթալ գանակները ի՞նչ ը-
րիք:

— Ի՞նչ պիտի ընենք, չի կերանք եա:

— Էյ հիմա ի՞նչ պիտի ըլլայ:

— Սա պիտի ըլլայ որ, ձեր ըրածին փոխա-
րէն աղւոր խուզի մը փուռը պիտի տաք ու մե-
զի հրամցունէք որ թէնճիրէն, խառավանան,
թէփսին, թապախներն ու գաւաթները առնէք:

— Չըսէ՞ք. տիմեաթա բիրինճէ կիտէր ի-
քէն էվտէքի պուլիւրտան օլմուշըդ:

— Նէ՛ եաբալըմ աղբար, օյունա կիրէն օյ-
նաեաճագ. պիղէ էթտիլինիլէ գարշըլըդ պա-
գըռլարը սէքվէստրօյա արտըդ. տառըլմայա կէլ-
մէզ. գուզու կէլիլ. պագըռլար վէրիլիր: «Շէր
իլէ քէսիլէն բարձագ աճըմաղ» տէմիլլէր:

ԲԻԿՕԼԷԹԹՕ

ՆՈՐ ՀԻՍՏՈՐԻԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԵՆԻԻԻ ԶՈՀԵՐ

(Պատկեր մը տաճկահայաստանի իրական կեանքէն)

Գրեց

Ղազարոս Պ. Նահապետեան

Գին 1 ֆր. 50 սանդիմ

Կը ծախուի Ա. Զարպհանէլեան գրատունը:

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (20)

ՌԷՆԷ ՏԸ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ԳԱՐՄԱՐ-ՄԱՄՈՒԿԸ)

Ուրեմն, կը հետեցունէր երկու անմեղներուն պաշտպանը, մարդասպանը պէտք էր փնտռել եթէ ոչ տիկին Լիուի բարեկամներուն, գէթ իր ծանօթներուն կամ այն մարդոց մէջ որք կրնային գիտակ ըլլալ անոր սովորութիւններուն: Այս մասին վարդ աղախինին տա- լիք տեղեկութիւնները շատ թանկագին կրնային ըլլալ:

Բոլոր այս զիտողութիւններուն արդիւնքը սա ե- ղաւ որ, թէեւ այս տեղեկագիրին ընթերցումը գիշերն ուշ ժամանակ վերջացուցած, քոնկ իշխանը հրաման ղրկած էր սակայն Մէնկի, որ յաջորդ առտուն կանուխ իրեն ներկայանայ:

Նմանապէս հրամայած էր իր թիկնապահներէ մե- կուն որ լուսնալուն պէս ֆուն-Սի երթայ և անկից բե- րէ տիկին Լիուի սպասուհին, զոր ոչ ոստիկանութեան վերատեսուչը, ոչ դատաւորը միտք չէին ըրած հարցա- փորձել:

Մէնկ, զոր տակաւին քանդոնի եղբունադատ ատե- նի նախագահական թոռին վրայ միայն տեսնը, շատ խռովեցաւ երբ զինքն արթնցունելով ծանուցին պալա- տէն եկած պատգամաւորը:

Քաղաքը չգտնելով զայն, պատգամաբերը Հօնան կղզին գացած էր փնտռելու: Ուստի մանտարէնը մտա- ծեց որ ծանր բան մը կար:

Ի զուր հարցափորձեց այդ պաշտօնատարը՝ որ բան մը չէր գիտէր. բայց հրամանը բացարձակ էր. փոխար- քան իրեն պիտի սպասէր առտուն:

Մէնկ գիշերուան մնացեալ մասն անցուց մտածե- լով թէ կայսեր հօրեղբորորդին ի՞նչ կուզէր իրմէ:

Ազնիւ դատաւորը, ինչպէս իր պաշտօնակիցները, մանր մուկը յանցանքներ իրօք ունէին իրենց խիղճին վրայ, մանաւանդ իր վերջին պաշտօնին առթիւ ի Պոք- քա-Թիկրիս, ուր իր գաղտնի պայմանագրութիւնները մաքսաւոյսներուն հետ, կրկնապատկած էր իր հարըս- տութիւնները:

Բայց այս գարձուածքները այնքան մուտ գտած էին պաշտօնեաներուն բարքերուն մէջ որ իշխանին հը- րամանին շարժառիթն այս չէր կրնար ըլլալ:

Ինչ որ ալ ըլլար, Մէնկ մտաուրի մէջ էր: Կը

նախազգար թէ վարած այնքան անուշ և այնքան հան- դարտ կեանքը պիտի խռովուէր:

Մէնկ այն ատեն բարի խոշոր մարդ մըն էր հե- ղուկ, գիտուն՝ քանի որ բարձր պաշտօնի մը հասած էր, բայց հասարակ իմացականութեան տէր:

Հեշտասէր մէկն էր մանաւանդ, բառին բովան- դակ նշանակութեամբը: Իր սեղանը գաւառին լաւա- գոյներէն մէկը կը նկատուէր, և չար լեզուները կը- սէին թէ իրեն ծառայողները մանկամարդ և գեղեցիկ աղախիններ էին լոկ, թէեւ ինք ամուսնացած ու զա- ւակներու հայր եղած ըլլար:

Նոյն իսկ կաւեյցունէին թէ շատ անգամ ճանչ- ցուած էր իր գննտուան, գիշերը, քանդոնի նաւահան- գըստին մէջ, նաւերու շուրջը:

Ինչ որ ստոյգ էր, ինչ որ Բերքինս և Սըր Ար- թիւր պիտի կրնային հաստատել, սա էր թէ ծանրաբա- րոյ նախագահը անհունապէս նախամեծար կը համարէր շէրին և ֆրանսայի գիւնին, մանաւանդ շանթանեան, բրինձի օղիէն:

Ուստի շատ գծուար եկաւ Մէնկի երբ յաջորդ առտուն կանուխ հեռացաւ իր անուշ մենտարէնէն, բայց գիտէր թէ երեք նահանգներու կառավարիչը չէր կա- տակեր իր ստորագաս պաշտօնեաներուն հետ:

Հետեւապէս որոշուած ժամուն իր գահաւորակը ներս մտաւ պալատին սեմէն:

Պտոյտը, բաց օդը, մեծարանքները որոց առար- կայ եղած էր ճամբուն վրայ, այս ամենը հանդարտե- ցուցած էին զայն քիչ մը, և իր սովորական ժպտուն դեմքովը պատասխանեց զինուորական բարեւին զոր պա- հան ուղղեց իրեն սրահին դուռն որ կառաջնորդէր Ն. Բարձրութեան ընդունելութեան սրահը:

Յանկարծ, երբ իր ժամանումը ծանուցանել պիտի տար, գէմը ելաւ տիկին Լիուն զոր իշխանը կանչել տուած էր: Անմիջապէս հասկցաւ թէ խնդիրը Սօլ— Պրոտէի դատին վրայ էր և բոլորովին հանդարտեցաւ:

Իր անսխալ իրաւարարի սնամտութեամբը համոզուած էր թէ այդ դատը խնամքով և արդարութեամբ տեսած էր, և ինքնիրենը ըսաւ թէ, իշխանը պարզապէս կը փափագէր մէկ բանի վերջին բացատրութիւններ խնդ- րել իրմէ անշուշտ:

Այն ատեն, ամբաստի մարդու մը երեւոյթովը ներկայացաւ փոխարքային առջեւ:

Մինակ, երբ սովորական երեք ծնրագրութիւններն ընելէ յետոյ, աչքերն անոր վրայ վերցուց, պարմացաւ անոր խիստ ակնարկին վրայ և սկսաւ վախճալ թէ խաբ- ուած է իր ախորժեղի ենթագրութիւններուն մէջ:

Արդարեւ քոնկ իշխանը հագիւ պատասխանած էր անոր ողջունին :

Իր աշխատութեան սեղանին կրթնած և իր քարտուղարներէն շրջապատուած, կը թղթատէր ստուար պաշտօնատետր մը զոր Մէնկ անմիջապէս ճանչցաւ թէ լէնկի դատինն էր, և առ նուազն բառորդ ժամ մը բնաւ ուշադրութիւն չըրաւ դատաւորին, իբր թէ սատակաւին իր Հօնանի բնակարանը գտնուէր :

Տիկին Լիու ներս մտցուած էր Մէնկի Հետ միեւնոյն ժամանակ, և իշխանին մէկ նշանին վրայ նստած էր :

Այս ամենը յոյժ կը խուզէր Պօքթա—Թիկրիսի նախարկ մանտարէնը, որ իր խիղճը կը բնէր երկչոտութեամբ, երբ կայսեր հօրեղբորորդին վեր առնելով զըլուխը մէկէնիմէկ ըսաւ .

—Պարոն նախագահ, մեծ ուշադրութեամբ քննեցի լէնկ—Թա—Լանկի սպանութեան վերաբերեալ թուղթերը, և չտեսայ բոլոր այն պաշտօնագրութիւնները զոր կը պահանջէր այսքան ծանր գործ մը : Ասոր համար բերիլ տուի ձեզ, վասն զի, այս թուղթերը բեքին զրկելէ առաջ, տեղեկութիւններու պէտք ունիմ, զորս դուք միայն կրնաք տալ :

—Պատրաստ եմ Ձեր Բարձրութեան հրամաններուն, ըսաւ Մէնկ, ջանալով հանդարտ երևիլ :

—Այլ տեսեմ որ, շարայարեց իշխանը, այս դատին հարցաքննութիւնը բաղձածուած բոլոր խնամքովն եղած չէ : Մանաւանդ կը ցաւիմ որ ոստիկանութեան վերատեսուչը և դուք հարկ համարեր էք շատ տաժաւների կանխահաս բանտարկութեան մը ենթարկել մանկամարդ հարսը որուն վրայ դարձած են բնականաբար ձեր առաջին կասկածները : Ձեզ նման գիտուն մը երբէք անգիտանալու չէ սակայն թէ դասակարգի մը այն կիները որոնք յանցանքով մը կամ ոճիրով մըն են ամբաստանուած, կրնան թողուիլ իրենց ամենէն մօտաւոր ազգականներուն պահպանութեանը ներքեւ, որք պատասխանատու կըլլան անոնց գլխուն : Տիկին լէնկ դեռ մայր ունի : Իր նկատմամբ ձեր խստութիւնը բացատրելու համար մէջ բերուելիք շարժառիթէն դուրս, կը մըտածեմ որ կրնայիք վայն մօրն հսկողութեանը յանձնել :

—Ոճիրը որով յանցաւոր ճանչցուած է այս աղջիկը, պատասխանեց Մէնկ բաւական հաստատ ձայնով, այնքան բացառիկ երեւցաւ ինծի որ պարտք համարեցի բանտ ղրկել զինքը, գոհացում տալու համար հանրային կարծիքին :

—Դատաւոր մը պէտք չէ երբէք յուզուի դուրսի

զրոյմներէն : Ահանջները գրց պարտի կատարել իր գործը :

—Ամբաստանեալը խոստովանեցաւ իր ոճիրը :

—Խոստովանեցաւ տանջանքէն յաղթուելով : Բայց լաւ. անցնինք ուրիշ կէտի մը : Վիլիսն պարտեղին մէջ գտնուած ոտքի դրոշմները բաղդատեցի՞ք այն դրոշմներուն հետ զորս Ի—Թէի սանդալները կրնային թողուլ հոն :

—Ոչ, կը խոստովանիմ :

—Էյ ուրեմն, առաջին սխալ մը գործած էք տուով, վասն զի պիտի տեսնայիք թէ այդ երիտասարդ կրօնաւորը չէր, որուն ոտքերը չափապանց պղտիկ են, այդ հետքերը ձգողը, ուժով ու բարձրահասակ մարդու մը դրոշմներն են : Նոյն է արիւնշաղախ դրոշմին համար որ գտնուած էր հարսանեկան անկողինն մէկ բարձին վրայ : Երկու դատապարտեալներէն ոչ մէկն ըրած է այդ նշանը : Ահագին ձեռքէ մը ելած է : Աերջապէս քննութիւն մը կատարեցի՞ք ի ֆուլ—Սի, այն քաղաքն ուր կը բնակէր Սօլ—Պրոտէ ամուսնութենէն առաջ, ոճիրէն առաջ :

—Ոչ, միմաջ Մէնկ, հետզհետէ խռովեցի :

—Չտեղեկացա՞ք թէ Տիկին Լիու թշնամի մը ունէր, թէ իր աղջիկը չէ՞ր փնտոտուեր լէնկ—Թա—Լանկէն զատ ուրիշ մէկէ մը :

—Բայց ճիշդ իր Ի—Թէի դարմիկին կողմէ : Այդ պատճառաւ նախ ենթադրեցի, յետոյ համոզուեցայ թէ այդ նախանձառ թեկնածուն էր մարդասպանը :

—Սխալ, ըսաւ տիկին Լիու, որ այդ հարցաքննութեան մէկ բաժը չէր կորսնցուններ : Եղբորորդիս, իրաւ, փափագ յայտնած էր փնտաս ըլլալ, բայց երբ իրեն ըսի թէ այդ ամուսնութիւնն անկարելի էր, գլուխ ծռեց :

(Շարունակելի)

Բարեյիշատակ եղիպար Մուրատեանի հեղինակած «Քննական Պատմութիւն Արշակ Բ.ի և անոր Պապ որդւոյն» անուն երկասիրութիւնը այս անգամ լոյս տեսած է Աղեքսանդրոյ «Արաքս» նորահաստատ տպարանէն և կը ծախուի ի գին 21½ ֆրանք : Պուլկարիոյ և Թումանիոյ մէջ ստանալ փափագողք գիմելու ևն մեր խմբագրութեան :